Հայտարարություն

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ն հայտարարում է ֆինանսական առաջատար մասնագետ/հաշվապահի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնի նկատմամբ ներկայացվող չափանիշները և պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, չափահաս Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

***Աշխատանքի նպատակը***՝ Ընթացիկ ֆինանսական կառավարման ծառայությունների ապահովում և աջակցություն ֆինանսական կառավարմանը վերաբերող միջոցառումների իրականացմանը:

***Պարտավորություններ***

1) Պահպանի փաստաթղթերի հավաքագրման, ստուգման և պատրաստման ընթացակարգերը, որոնք պահանջվում են Մատակարարի Վճարման պահանջագրերը ստուգելու համար: Վճարման հանձնարարագրերի պատրաստում: Վճարման փաստաթղթերի և Մատակարարներին կատարվող վճարումների գրանցում:

2) Ներգրավված ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված Վարկային համաձայնագրերի շրջանակներում տոկոսավճարների, կոմիսիոն վճարների և վարկերի մարման մոնիթորինգ:

3) ՀԲ, միջազգային կազմակերպությունների և ՀՀ օրենսդրության պահանջներին Կենտրոնի ֆինանսական միջոցառումների համապա-տասխանության ապահովում:

4) Ֆինանսական միջոցների թիրախավորված և պատշաճ օգտագործում:

5) Ամսական, եռամսյակային, վեցամսյա և տարեկան ֆինանսական հաշվետվությունների մշակում:

6) Կենտրոնի բյուջեի կատարում:

7) Ժամանակին և պատշաճ կազմված ռեեստրի շրջանակներում ակտիվների մոնիթորինգի իրականացում:

8) Ծրագրերի շրջանակներում ստորագրված, Կենտրոնի կողմից իրակա-նացվող պայմանագրերի շրջանակներում նախանշվող վճարումների և ընթացակարգերի ապահովում:

9) Տնօրենի այլ հանձնարարականների իրականացում:

***<u>Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝</u>***

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) տառապում է որևէ հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը և լիազորությունների իրականացմանը.

3) դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

4) խուսափել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից.

5) զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից կամ որին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել.

6) նախորդ 3 տարվա ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և կազմակերպության պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

**Մրցույթին կարող են մասնակցել հետևյալ որակավորում ունեցող անձինք.**

1) Բարձրագույն կրթություն ֆինանսների, հաշվապահական հաշվառման կամ այլ համապատասխան ոլորտում /համապատասխան բնագավառի/
2) Կառավարման ոլորտի առնվազն 1 տարվա կամ առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ միջազգային կազմակերպություններում 3 տարվա աշխատանքային ստաժ
3) Իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր), Համաշխարհային Բանկի ընթացակարգերի իմացությունը կդիտարկվի որպես առավերլություն,
4) Հայերենի (գրավոր եւ բանավոր) գերազանց իմացություն, ռուսերենի եւ անգլերենի լավ իմացություն,
5) Տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
6) Համակարգչային հմտություններ, մասնավորապես՝ MS office, ՀԾ, ինտերնետով աշխատելու կարողություն,
7) Կազմակերպչական, հաղորդակցման, միջազգային հարաբերությունների կարգավորման եւ թիմային աշխատանքի կարողություններ,
8) Մեծ ծանրաբեռնվածությամբ աշխատելու կարողություն:

**Վերոնշյալ չափանիշներին համապատասխանող անձինք, մինչեւ 2014 թ. ապրիլի 11-ը, ժամը 17:00-ն՝ պետք է ստորեւ նշված հասցեով ներկայացնեն դիմումները եւ ստորեւ պահանջվող փաստաթղթերը անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով /Աննա Ջալյանին/.**

1) գրավոր դիմում հիմնարկի տնօրենի անունով՝ նշելով այն պաշտոնը, որին հավակնում է դիմող քաղաքացին. (դիմումի ձևը կցված է www.ffpmc.am կայքում)
2) ինքնակենսագրություն.
3) տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները.
4) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը կամ լիազորությունների իրականացմանը: Այդ հիվանդությունների ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 27-ի թիվ 908-Ն որոշմամբ.
5) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
6) հայտարարություն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվող օտար լեզվի (լեզուների) տիրապետելու մասին՝ թափուր պաշտոնին ներկայացվող պահանջների չափանիշներին համապատասխան.
7) հայտարարություն այն մասին, որ ինքը չի դատապարտվել հանցագործության համար, կամ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.
8) արական սեռի անձինք ներկայացնում են նաեւ զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր եւ զորակոչային տեղամասին կցագրման վկայական կամ համապատասխան տեղեկանք.
9) մեկ լուսանկար՝ 3X4 չափսի.
10) անձնագրի պատճենը.
11) 2 բնութագիր (երաշխավորագիր).
12) աշխատանքային գրքույկի կամ աշխատանքային պայմանագրի պատճենը (պատճենները) կամ սահմանված կարգով տրված համապատասխան տեղեկանք:

Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Մրցույթը /հարցազրույցները/ կանցկացվի 2014 թ. ապրիլի 23-ին ժամը 14:30-ին հետևյալ հասցեով.

**Կառավարության տուն 1, Հանրապետության հրապարակ**
**Երեւան, Հայաստանի Հանրապետություն**
**ՀՀ ֆինանսների նախարարության**
**Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն /344 սենյակ/**
**հեռ. (37410) 523 471**
**ֆաքս. (37410) 545 708**